ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ IV ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1958 թ. սկսած պարբերաբար հրավիրվում են Հին Արևելքի պատմության, բանասիրության և մշակույթի ուսումնասիրմանը նվիրված համամիութենական գիտական կոնֆերանսներ, որոնք վկայում են սովետական արևելագիտության առաջընթացը։ Վերջին՝ IV կոնֆերանսը, որ տեղի ունեցավ Լենինգրադում, ս. թ. փետրվարի 5-ից 10-ը, հանրագումարի բերեց նախորդ տարիներում նշված բնագավառներում կատարված աշխատանքների արդյունքները։

Առաջին պլենար նիստում կոնֆերանսը բացեց ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների լենինգրադյան բաժանմունքի վարիչ Յու. Ա. Պետրոսյանը։ Նա համառոտակի կանգ առավ անցած տարիներում հանրապետական և կենտրոնական գիտական հիմնարկների ձեռք բերած հաջողությունների վրա, որոնք արդեն իրենց արտացոլումն են գտել սեսիայի ծրագրում և տպագիր թեզիսներում։ Յու. Պետրոսյանը նշեց, որ ընդարձակվել են հետազոտված հարցերի սահմանները՝ աշխարհագրական, ժամանակագրական և թեմատիկ. ավանդական պրոբլեմների (սոցիալ-տնտեսական և բանասիրական) կողքին մեծ ուշադրություն է նվիրվում հին գրությունների վերծանմանը, հին իրավունքին և գրականությանը, ինչպես նաև անցյալի երևույթների նկատմամբ սոցիոլոգիական մոտեցմանը։ Հատկապես ընդգծվեցին փոքրասիական հին լեզուների ուսումնասիրման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները։

Սոցիալ-տնտեսական պատմության սեկցիայի նիստերում լսվեցին մի շարք հետաքրքիր զեկուցումներ, կապված հին արևելյան հասարակությունների ներքին կյանքի հետ։ Մ. Լ. Գելցերը (Վիլնյուս) փորձեց պարզել Ուգարիտի բնակչության ոչ միայն ընդհանուր թիվը, այլև այդ հին արևելյան հասարակության կազմի մեջ մտնող տարբեր դասակարգերի ու խավերի ինչպես տոկոսային հարաբերությունը, այնպես և քանակական բացարձակ ցուցանիշները. Ն. Բ. Յանկովսկայան (Լենինգրադ) կանգ առավ Թագավորի և համայնքի հարաբերությունների վրա Միջագետքի Արապխա քաղաք-պետությունում մ. թ. ա. XV դարում և բացահայտեց դրանց մի քանի առանձնահատկությունները։

Երկու զեկուցում նվիրված էին նոր-բաբելական թագավորության պատմությանը, ավելի ճիշտ նրա կազմի մեջ մտնող առանձին դասակարգերի դրությանը։ Մ. Ա. Դամդամաևը (Լենինգրադ) անդրադարձավ մ. թ. ա. VI դարի Բաբելոնի ստրուկների վիճակին, հատկապես ուշադրություն դարձնելով մի շարք հետաքրքիր՝ ընդհանուր պատկերացումներից շեղվող առանձնահատկությունների վրա, իսկ Հ. Ա. Բելյաևսկին (Լենինգրադ) իր զեկուցումը նվիրեց նոր-բաբելական հասարակության միջին խավերի պատմությանը։

Հին արևելյան քաղաքակրթությունների կազմավորմանը անմիջականորեն նախորդող մի կարևորագույն երևույթի՝ «քաղաքային հեղափոխության» բնութագրմանն էր նվիրված Վ. Մ. Մասոնի (Լենինգրադ) զեկուցումը։ Ճշտելով և զարգացնելով մարքսիստ պատմաբան Գ. Չայլդի տեսությունը, զեկուցողը ցույց տվեց, որ նախնադարյան համայնական հասարակության զարգացման վերջին փուլում տեղի է ունենում արհեստների և արհեստագործության ինտենսիվ զարգացում, փոխանակության վերաճում կանոնավոր առևտրի, հավելյալ արտադրանքի զգալի կուտակում, որը իրացվում է մոնումենտալ կառույցների մեջ։ Այս պրոցեսները, որոնք լավ են վկայված հնագիտական նյութերով և որոնք բնութագրում են քաղաքային հեղափոխություն կոչված երևույթը, այսինքն քաղաքների առաջացումը, պայմանավորեցին վաղ դասակարգային հասարակության տնտեսական և մշակութային հիմքերի ստեղծումը։

Լեզվաբանության և գրության պատմության սեկցիայում որոշակի հետաքրքրություն առաջացրեց փոքրասիական լեզուների վերծանմանն ուղղությամբ տարվող աշխատանքը։ Ինչպես հայտնի է, խեթագիտության ակնհայտ հաջողությունների լույսի տակ առաջնահերթ անհրաժեշտություն է դարձել Փոքր Ասիայի մյուս լեզուների՝ լիկիերենի, փռյուգերենի, լիդիերենի, լուվիերենի, կարիերենի վերծանման և ընթերցման հարցը։ Այս տեսակետից մի կարևոր առաջընթաց քայլ արվեց Ա. Ա. Կորոլյովի և Վ. Վ. Շևորոշկինի (Մոսկվա) «Լիկիական արձանագրությունների մեկնաբանման հարցի շուրջը» զեկուցման մեջ։ Քսանթոսի բանաստեղծական և պաշտամունքային նշանակություն ունեցող լիկիական մեծ արձանագրության ընթերցման կապակցությամբ։ Փոքրասիական հին լեզուներում հանդիպող հատուկ անունների՝ օնոմաստիկայի ուսումնասիրմանն էին նվիրված Վ. Վ. Շևորոշկինի (Մոսկվա) և Լ. Ա. Գինդինի (Մոսկվա) զեկուցումները։

«Էտրուսկների լիդիական ծագման մասին Հերոդոտոսի վկայությունը (I, 94) լեզվաբանական փաստերի լույսի տակ» զեկուցումով

նույն սեկցիայում հանդես եկավ Ա. Ի. Խարսեկինը։

Գրականագիտության սեկցիայում լսվեցին մի քանի զեկուցումներ Միջագետքի և իրանահնգկական հնագույն գրականության մասին։ Շումերում գրականության ծագման մասին խոսեց Վ. Կ. Աֆանասևան (Լենինգրադ)։ Գրականության և Հարավային Միջագետքում մ. թ. ա. IV հազարամյակի վերջում հանդես եկող գրության փոխհարաբերության հարցը արծարծելուց հետո, սեպագիր բազմաթիվ նյութերի հիման վրա, զեկուցողը հետամուտ եղավ գրական ժանրերի ձևավորման ու զարգացման և գրականության՝ որպես արվեստի ինքնուրույն ճյուղի առաջացման երևույթին։ Վերջում հատուկ վերլուծման ենթարկվեցին երկու ժանր՝ թագավորական արձանագրությունները, որոնք իրենց առաջացմամբ պարտական են գրության ստեղծմանը և հիմներն ու աղոթքները, որոնք երկար ժամանակ հարատևել են բերանացի կերպով և գրի են առնվել համեմատաբար ուշ ժամանակ։ Նույն սեկցիայում լսվեցին Ի. Խ. Լեվինի (Դուշանբե—Լենինգրադ) «Հին արևելյան ստեղծագործությունների բանավոր վիճակի ուսումնասիրումը» և Բ. Ս. Բրադինսկու (Մոսկվա) «Գաթերի բանաստեղծական թարգմանության սկզբունքների մասին» զեկուցումները։

Ասսուրագիտության սեկցիայում լսվեց Ի. Մ. Դյակոնովի (Լենինդրադ) զեկուցումը «Ուր քաղաքը Ռիմսինի և Համուրաբիի օրոք»։ Զեկուցումը, ըստ էության, մարդկային հնագույն հասարակություններից մեկը սոցիոլոգիական հետազոտման ենթարկելու մի փորձ էր և նպատակ ուներ վեր հանելու մշակույթի դերը մարդու հասարակական հոգեբանության ձևավորման գործում։ Նման տեսանկյունից հարցերը դիտելու հնարավորություն են տալիս Հարավային Միջագետքի Ուր քաղաքի պեղումների շնորհիվ բացված մ. թ. ա. II հազարամյակի սկզբի նյութերը։ Այստեղ բացվել է երկու մեծ թաղամաս. մեկում հայտնաբերվել են մոտ 50 լավ պահպանված տներ, բազմաթիվ առարկաներով, ինչպես նաև երեք տաճար, դպրոց, ցորենի պահեստ, արհեստանոցներ, հյուրանոց, խանութներ։ Տներից շատերում գտնվել են սեպագիր նամակների և տարբեր փաստաթղթերի արխիվներ, պահեստներում՝ հաշվարկային փաստաթղթեր, դպրոցներում՝ ուսումնական, դիտական, կրոնական և գրական ստեղծագործություններ։ Եթե հաշվի առնենք, որ մեզ հայտնի են նաև նշված ժամանակաշրջանի իրավունքը և պատմությունը, ապա պարզ կլինի, թե հետազոտողը իր ձեռքի տակ աղբյուրների ինչպիսի հազվագյուտ մի կոմպլեքս է ունեցել, որի օգնությամբ բացահայտվում են մարդկանց հասարակական վարքի վրա ներգործող (տվյալ դեպքում՝ հնագույն Միջագետքի) մշակութային գործոնները։

Վ. Ա. Յակոբսոնը (Լենինգրադ) «Համուրաբիի օրենքների բնույթի մասին» զեկուցման մեջ միացավ այն գիտնականներին, որոնց կարծիքով այդ տեքստերը գործող իրավունքի փաստաթղթեր են, օրենսգիրք ամենօրյա գործածության համար։

Սեմագիտության և հարակից առարկաների սեկցիայում Հ. Գ. Մելքոնյանը (Երևան) զեկուցեց «Անապատական շարժումը Հյուսիսային Միջագետքում և Հայաստանում (IV—V դդ.)» թեմայի մասին։ Այդ շարժման ուսումնասիրումը նոր լույս է սփռում Հայաստանի վաղ միջնադարյան սոցիալական պատմության վրա։ Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում բորբորիտ տերմինի նոր ստուգաբանությունը՝ բար բարիտ, ասորերեն՝ անապատի որդի ձևով, որով ապացուցվում են բորբորիտների և անապատականների նույնությունը և բորբորիտյան շարժման միջագետքյան, ասորական աղբյուրները։ Կ. Գ. Ծերեթելին (Թբիլիսի) կանգ առավ վրացական բիբլիական տեքստերում հանդիպող սեմականությունների վրա և փորձեց լեզվական նման երևույթները բացատրել ոչ թե միջնորդ տեքստերի (հունարեն, ասորերեն, հայերեն) օգնությամբ, ինչպես այդ սովորաբար արվում էր, այլ վրացական աստվածաշունչը հրեական բնագրից անմիջականորեն բխեցնելու ճանապարհով։

Մի քանի զեկուցումներ նվիրված էին Կումրանի համայնքի պատմությանը (Կ. Բ. Ստարկովա, Լենինգրադ—«Երկրորդումն օրինացի» ազդեցությունը Կումրանի համայնքի գրականության վրա» և Ի. Դ. Ամուսին, Լենինգրադ—«Ասեյացիների երդումը»)։

Փոքր Ասիայի և Ուրարտուի պատմության հարցերին նվիրված սեկցիայում առաջինը հանդես եկավ Բ. Բ. Պիոտրովսկին (Լենինգրադ), որը խոսեց Կարմիր բլուրում 1964 թ. գտնված աստվածությունների փայտե արձանիկների մասին։ Այդ արձանիկները, որ մեզ են հասել իրենց հանդերձանքի մասերով և զենքերով, զեկուցողի կարծիքով, Կարմիր բլուրում գտնված բրոնզե արձանիկի նմանությամբ պատրաստվել են Էրեբունիի հիմնադրման օրերին և մ. թ. ա. VII դարի կեսերին փոխադրվել են վարչական նոր կենտրոնը՝ Թեյշեբաինի (Կարմիր բլուր)։

Հաջորդ զեկուցողը՝ Է. Ա. Գրանտովսկին (Մոսկվա) խոսեց Մուսասիրում, ասսուրա-ուրարտական սահմաններում և ընդհանրապես Ուրարտուի արևելյան շրջաններում իրանական լեզվի ու մշակույթի հետքերի մասին։ Ասսուրա-ուրարտական սեպագիր արձանագրություններում պահպանված տերմինների, անունների և հատկապես անձնանունների ստուգաբանությունը

ները թույլ են տալիս զեկուցողին առաջ քաշել մի շարք հարցեր՝ կապված իրանական ցեղերի ներթափանցման ուղիների, Պարսուա երկրի տեղադրման և ուրարտական Բադմաշտու աստվածության իրանական ծագման հետ։

Գ. Գ. Գեորգաձեն (Թբիլիսի) հանդես եկավ «Խեթական թագավոր Տելիպինուի հրամանագրի 28-րդ պարագրաֆի մեկնաբանման հարցի շուրջը» զեկուցումով, որը հետապնդում էր խեթական պետության մեջ գահի ժառանգման օրենքի հետազոտումը։ Ինչպես հայտնի է, հին խեթական թագավորության մեջ գահի ժառանգումը կարգավորված չէր։ Տելիպինուի օրոք հրատարակված օրենքի համաձայն հաստատվեց որոշակի հաջորդականություն այդ գործում։ Ն. Վ. Խազարաձեն (Թբիլիսի) իր զեկուցումը նվիրեց հին արևելյան և անտիկ աղբյուրներում հանդիպող մուշկու և մոսխոյ ցեղերի պատմության ուսումնասիրմանը և եկավ այն եզրակացությանը, որ այդ երկու անունների տակ պետք է հասկանալ միևնույն էթնիկական խումբը։

Ի. Մ. Դունաևսկայայի (Լենինգրադ) զեկուցումը վերնագրված էր «Խեթական հիերոգլիֆ տեքստերի բանասիրական ուսումնասիրման ժամանակակից մակարդակը»։ Զեկուցողը քննության առավ լեզվաբանների և պատմաբանների կողմից այդ տեքստերի օգտագործման եղանակը և այն պահանջները, որոնք առաջ են գալիս նրանց պատճենավորման և տառադարձության ժամանակ։ Մ. Շ. Խիդաշելին (Թբիլիսի) իր զեկուցման մեջ կանգ առավ Կովկասի և Լուրիստանի միջև գոյություն ունեցող մի քանի կրոնապաշտամունքային զուգահեռների վրա։ Գ. Ա. Մելիքիշվիլին (Թբիլիսի) խոսեց հին արևելյան և կովկասյան լեզուներում մետաղների մի քանի անվանումների մասին։ Պարսկական պուլադ՝ պողպատ բառը, որը լայն տարածում ունի բազմաթիվ լեզուներում, հեղինակի կարծիքով կարելի է բխեցնել վերջերս հայտնաբերված ուրարտական արձանագրության մեջ հիշատակվող և Իրանի հյուսիս-արևմտյան մասում տեղադրվող Պուլուադի երկրի անունից։ Վրացական ոքինա (քինա) բառը՝ երկաթ նշանակությամբ, կարելի է ծագեցնել խեթական կուննա-կուաննայից, իսկ խուրիական ուշհուն՝ արծաթ, համեմատվում է վրացական վեշխի նույն նշանակությունը ունեցող բառի հետ։

Իրանագիտության սեկցիայում Ի. Մ. Օրանսկին (Լենինգրադ) փորձեց ստուգաբանել մ. թ. ա. IV դարի բակտրիական առաջնորդ Կատանեսի անունը (մեծ, հսկա, ավագ)։ Ա. Գ. Փերիխանյանը (Լենինգրադ) հանդես եկավ «Սասանյան Իրանում ժառանգականության իրավունքի հարցի շուրջը» թեմայով և հիմնականում կանգ առավ «Մատիկանում» սասանյան օրենսգրքում հանդիպող մի շարք իրավաբանական տերմինների բացատրության վրա, որոնք նոր լույս են սփռում Առաջավոր Ասիայի ուշ անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջանի սոցիալական կյանքի վրա։ Գ. Ա. Տիրացյանը (Երևան) խոսեց Հայաստանի աքեմենյան ժամանակաշրջանի գեղարվեստական մետաղագործության մասին։ Սպասի և զարդի այդ առարկաները որոշակի առնչություններ են դրսևորում իրանական ինչպես կիրառական արվեստի, այնպես և մոնումենտալ ստեղծագործությունների հետ։ Այդ առարկաների որոշ մասը, սակայն, տիպաբանական և նույնիսկ ոճաբանական տեսակետից մոտ է կանգնած Ուրարտուի մշակույթին։ Յու. Ա. Զադնեպրովսկին (Լենինգրադ), հենվելով Իրանի հյուսիսային մասում, Դեյլամանում Տոկիոյի համալսարանի իրանա-իրաքյան հնագիտական արշավախմբի կատարած պեղումների տվյալների վրա, առաջ քաշեց մ. թ. առաջին դարերում Հյուսիսային Իրանում սարմաթական և ալանական ցեղերի գոյության հարցը։

Նույն կոնֆերանսում գործում էին նաև մի շարք այլ սեկցիաներ՝ եգիպտաբանության, հնդկագիտության, Հեռավոր Արևելքի, որտեղ լսվեցին բազմաթիվ զեկուցումներ։

Եզրափակիչ պլենար նիստում ընդունվեց բանաձև, որը նախագծեց Հին Արևելքի ուսումնասիրման հետագա հաջող զարգացումը ապահովող հիմնական անելիքները։ Որոշվեց արևելագետների համամիութենական հաջորդ՝ V կոնֆերանսը անցկացնել 1971 թ.։ Մինչ այդ հնարավոր համարվեց անցկացնել մի շարք թեմատիկ, մասնակի բնույթ ունեցող գիտական կոնֆերանսներ։ Բանաձևի մեջ հատուկ կետ մտցվեց հանրապետություններում Հին Արևելքի պրոբլեմատիկայի ընդլայնման վերաբերյալ։ Հին Արևելքի պատմության վերաբերյալ հարուստ նյութերի առկայությունը և սովետական արևելագիտության առջև կանգնած նոր խնդիրները անհրաժեշտ են դարձնում էլ ավելի ակտիվորեն ներգրավել այդ աշխատանքների մեջ հանրապետությունների համապատասխան հիմնարկների մասնագետներին։

Գ. ՏԻՐԱՑՅԱՆ